



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

## Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. [info@styeoghiche.org.uk](mailto:info@styeoghiche.org.uk)  
[www.styeoghiche.org.uk](http://www.styeoghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

## SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

6th February 2022

Bulletin 07/2022

### Fourth Sunday after Nativity (Eve of the Fast of the Catechumens)

#### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ՏԻՄՈԹԷՈՍ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 2:15-26

Ձանա՛ դուն քեզ գնահատելի ցոյց տալ Աստուծոյ առջեւ, ըլլալով այնպիսի գործաւոր մը՝ որ պիտի չամչնայ, շիտակ բացատրելով ճշմարտութեան խօսքը: Բայց հեռո՛ւ կեցիր սրբապիղծ ունայնաբանութիւններէն, քանի որ անոնք աւելի պիտի յառաջդիմեն ամբարշտութեան մէջ, եւ անոնց խօսքը պիտի ճարակէ քաղցկեղի պէս: Ասոնցմէ՛ եւ Հիմենոս եւ Փիղետոս, որոնք վրիպած են ճշմարտութենէն՝ ըսելով թէ մեռելներուն յարութիւնը արդէն եղած է, եւ կը կործանեն ոմանց հաւատքը: Սակայն Աստուծոյ հիմը ամուր կը կենայ եւ ունի սա՛ կնիքը. “Տէրը կը ճանչնայ անոնք որ իրն են”, նաեւ. “Ո՛վ որ կ’արտասանէ Զրիստոսի անունը՝ թող հեռանայ անիրաւութենէ”:

Մեծ տան մը մէջ կան ո՛չ միայն ոսկի եւ արծաթե անօթներ, այլ նաեւ փայտե եւ հողե անօթներ: Ոմանք պատիւի համար են, ու ոմանք՝ անպատուութեան համար: Ուստի եթէ մէկը մաքրէ ինքզինք ասոնցմէ, պիտի ըլլայ պատիւի անօթ մը՝ սրբացած եւ պիտանի իր Տէրոջ, պատրաստուած ամեն բարի գործի համար: Փախի՛ր նաեւ երիտասարդական ցանկութիւններէն, ու հետամո՛տ եղի՛ր արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան, անո՛նց հետ՝ որ կը կանչեն Տէրոջ անունը մաքուր սիրտով: Բայց հրաժարե՛ յիմար եւ անիմաստ վեճերէն, գիտնալով որ կռիւներ կը ծնին անոնցմէ: Տէրոջ ծառան պէտք չէ կռուի, հապա՛ ըլլայ հեզահամբոյր բոլորին հանդէպ, սորվեցնելու ընդունակ, անոխակալ, ընդդիմացողները հեզութեամբ կրթող, որ թերեւս Աստուած ապաշխարութիւն տայ անոնց՝ ճշմարտութիւնը գիտնալու համար, ու սթափին Չարախօսին թակարդէն, որմէ բռնուած են՝ անոր կամքին ծառայելու:

#### The Epistle of St Paul to the 2 Timothy 2:15-26;

Do your best to present yourself to God as one approved, a worker who does not need to be ashamed and who correctly handles the word of truth. Avoid godless chatter, because those who indulge in it will become more and more ungodly. Their teaching will spread like gangrene. Among them are Hymenaeus and Philetus, who have departed from the truth. They say that the resurrection has already taken place, and they destroy the faith of some. Nevertheless, God's solid foundation stands firm, sealed with this inscription: “The Lord knows those who are his,” and, “Everyone who confesses the name of the Lord must turn away from wickedness.”

In a large house there are articles not only of gold and silver, but also of wood and clay; some are for special purposes and some for common use. Those who cleanse themselves from the latter will be instruments for special purposes, made holy, useful to the Master and prepared to do any good work.

Flee the evil desires of youth and pursue righteousness, faith, love and peace, along with those who call on the Lord out of a pure heart. Don't have anything to do with foolish and stupid arguments, because you know they produce quarrels. And the Lord's servant must not be quarrelsome but must be kind to everyone, able to teach, not resentful. Opponents must be gently instructed, in the hope that God will grant them repentance leading them to a knowledge of the truth, and that they will come to their senses and escape from the trap of the devil, who has taken them captive to do his will.

#### Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

### ՅԻՍՈՒՍ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 6:15-21

Ուրեմն Յիսուս, գիտնալով թե պիտի գան յափշտակելու զինք՝ որպէսզի թագաւոր ընեն զինք, դարձեալ լեռը գնաց՝ առանձին:

Երբ իրիկուն եղաւ՝ իր աշակերտները իջան ծովեզերքը, ու նաւ մտնելով կ'երթային ծովուն միւս կողմը՝ Կափառնայում: Արդէն մթնցած էր, բայց դեռ Յիսուս եկած չէր իրենց: Ծովն ալ ալեկոծ էր՝ սաստիկ փչող հովէն: Երբ թի վարելով քսանհինգ կամ երեսուն ասպարէզի չափ գացին՝ տեսան Յիսուսը, որ կը մօտենար նաւուն՝ ծովուն վրայ քալելով, ու վախցան: Բայց ինք ըսաւ անոնց. «Եւ եմ, մի՛ վախնաք»: Ուստի ուզեցին ընդունիլ զինք նաւուն մէջ. եւ նաւը իսկոյն հասաւ այն երկիրը՝ ուր կ'երթային:



### The Holy Gospel of Jesus Christ according to John 6:15-21

Jesus, knowing that they intended to come and make him king by force, withdrew again to a mountain by himself.

#### Jesus Walks on the Water

When evening came, his disciples went down to the lake, where they got into a boat and set off across the lake for Capernaum. By now it was dark, and Jesus had not yet joined them. A strong wind was blowing and the waters grew rough. When they had rowed about three or four miles, <sup>b</sup> they saw Jesus approaching the boat, walking on the water; and they were frightened. But he said to them, **“It is I; don’t be afraid.”** Then they were willing to take him into the boat, and immediately the boat reached the shore where they were heading.

### Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՈՐԴԻՆԵՐԻ ԵՒ ԹՈՌՆԵՐԻ՝ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ, ՎՐԹԱՆԵՍԻ, ՀՈՒՍԻԿԻ, ԳՐԻԳՈՐԻՍԻ ԵՒ ԴԱՆԻԵԼԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Արիստակեսը Ս. Գրիգոր Լուսավորչի կրտսեր որդին էր և շատ վաղ հասակից մտել էր վանական կյանք: Եպիսկոպոս է ձեռնադրվել իր հոր կողմից՝ դառնալով նրա գործակիցը: 325 թվականին մասնակցել է Նիկիայի Ա տիեզերաժողովին: Արիստակեսը հոր մահից հետո դարձել է հայոց հայրապետ: Սպանվել է 333 թվականին Չորրորդ Հայքի Արքեպոստոս իշխանի կողմից՝ նրա անուղղելի վարքը քննադատելու համար և թաղվել Թիլ ավանում:

Վրթանեսը Լուսավորչի անդրանիկ որդին էր: Ամուսնացած էր և ուներ երկու զավակ՝ Գրիգորիսը և Հուսիկը: Եղբոր մահից հետո բազմել է Հայոց հայրապետական աթոռին: Թեև Հայաստանում քրիստոնեությունը հաստատվել էր որպես պետական կրոն, սակայն բազմաթիվ վայրերում դեռևս գոյություն ուներ հին հավատը: Այդ պատճառով Վրթանեսը հայրապետն ամենամյա մեծահանդես պաշտամունք էր կազմակերպում Տարոնում՝ հեթանոսությունն աստիճանաբար վերացնելու համար: Վրթանեսը վախճանվել է 341 թվականին և թաղվել Դարանաղյաց Թորդան ավանում, Լուսավորչի նշխարների մոտ: Գրիգորիսը Վրթանեսի ավագ որդին էր: Նա Հայ Եկեղեցու կողմից հարևան հեթանոս ազգերի մեջ քրիստոնեությունը տարածելու ջանքեր է գործադրում: Նահատակվում է մագքութների Մանեսան թագավորի հրամանով, իսկ մարմինն իր սարկավազների ձեռքով ամփոփվում է Արցախի Ամարաս ավանում, որտեղ 489 թվականին Աղվանից Վաչագան թագավորի օրոք, սրբի նշխարների վրա կառուցվում է Ս. Գրիգոր եկեղեցին: Հուսիկը Վրթանեսի կրտսեր որդին էր: Ամուսնացած էր հայոց Տիրան արքայի դստեր հետ և ուներ երկու զավակ՝ Պապը և Աթանագինեն: 341 թվականին նա ընտրվում է կաթողիկոս: Հուսիկ հայրապետը, ընդդիմանալով Տիրանին, ով ցանկանում էր Հուլիանոս Ուրացողի պատկերը դնել եկեղեցում, նրա հրամանով 347 թվականին բրածեմ նահատակվում է և ամփոփվում Թորդանում: Դանիել Ասորի եպիսկոպոսը, ով հռչակված էր սրբալից կենցաղով և ծերության ժամանակ մենակյաց կյանք էր վարում Տարոնի Հացյաց Դրախտ կոչված վայրում, Հուսիկ հայրապետի սպանությունից հետո հրավիրվում է կաթողիկոսանալու: Առաջին հանդիպման ժամանակ խիստ հանդիմանում է արքային՝ մեղադրելով Հուսիկ հայրապետի սպանության մեջ, որի համար արքայի հրամանով խեղդամահ է արվում: Նրա երկու աշակերտները՝ Եպիփանը և Շաղիտան, նրա մարմինը թաղում են Հացյաց Դրախտ մենաստանում:

## COMMEMORATION OF ST. GREGORY THE ILLUMINATOR'S SONS AND GRAND-SONS – STS. ARISTAKES, VRTANES, HOUSIK, GRIGORIS AND DANIEL

Aristakes was St. Gregory the Illuminator's youngest son. He led a monastic life from a very early age. He was consecrated a bishop by his father, and became one of St. Gregory's most valued supporters. In 325 A.D. he participated in the First Ecumenical Council of Nicaea, representing the first Catholicos and the entire Armenian Church. Following St. Gregory the Illuminator, he became Catholicos of All Armenians.

He was killed in 333 A.D. by Arkeghayos, a prince of Greater Armenia, for criticizing some incorrigible behavior of the king, and was buried in the village Til. Vrtanes was St. Gregory the Illuminator's elder son. He was married and had two sons – Grigoris and Housik. Following the death of his brother, he ascended to the Catholicos Throne. Although Christianity was already fairly well accepted as the official religion, some remnants of paganism and heathenism continued in remote areas and smaller villages. One region that had substantial resistance was the province of Daron. Vrtanes organized annual festive Christian celebrations in this province to gradually eliminate their pagan beliefs and practices.

Vrtanes died in 341 A.D. and was buried in the village Tordan, near the relics of St. Gregory the Illuminator.

Grigoris was the elder son of Vrtanes. He was sent by the Armenian Church to spread Christianity among the neighboring nations of Armenia. He was martyred upon the order of King Sanesan, the head of the nomadic Mazkut tribe. His remains were buried by the deacons who served with him, in the village of Amaras, in Artsakh. In 489 A.D. upon the order of the Aghvan (Caucasian Albanian) King Vachagan, the Church of St. Gregory was built on this site.

Housik was the younger son of Vrtanes. He married with the daughter of the Armenian King Tiridates and had two sons – Pap and Antiochus. In 341 A.D. he was elected as the Catholicos of All Armenians.

He resisted and challenged the will of King Tiran, who wished to hang the portrait of Julianus the Betrayer in a church. He was severely beaten, martyred, and was buried in the village of Tordan, province of Daranaghi.

Bishop Daniel Assyrian was famous for his saintly way of life. As he grew older he led an ascetic and isolated life in the province of Daron. Following the martyrdom of Housik, he was invited to be the Catholicos of All Armenians.

During the very first meeting with King Tiran, he strictly castigated him on the murder of the Pontiff Housik. The king summarily ordered the death of Daniel by strangulation. His remains are buried in the Monastery of Hatsyats Draht.

The sons and grandsons of St. Gregory the Illuminator are remembered and commemorated by all Armenian Churches throughout the world for their service to the Church, their faithfulness to Christianity, and their commitment to the Armenian people.

### Diarn'ntarach Stəwēnēnqanawəz

Faith, Hope and Love are principal graces and values in Christianity. During a person's baptism, the priest asks the godfather what does the child or the person (the catechumen) being baptised requests. "Faith, hope, love and baptism," responds the godfather. St. Paul underlines that "the greatest of these is love" (1 Corth. 13.13). In 2016, the Primate instituted a new tradition of blessing newlywed couples in the Armenian Church on the occasion of the Feast of the Presentation of Our Lord and Saviour Jesus Christ. This is the feast celebrating the event of Jesus' presentation to the temple as a child by his parents. On Sunday **13th February 2022 at 18:30**, we will be celebrating Stəwēnēnqanawəz Presentation of Jesus Christ to the Temple. A special Blessing of Young Families will follow the special prayers. Please join and let us celebrate the service of light is unique Armenian Tradition.



### Customs & Traditions of the Armenian Apostolic Church cont....3

#### **Sharing in the Holy Bread (Mas)**

Nearing the end of the Divine Liturgy the holy bread or "Mas" is distributed among the congregation. "Mas" means share or portion. When you take a piece of "Mas" you kiss it and eat it making the sign of the cross. It is custom to take a small portion of "Mas" home to those members of the family who were desirous to come to church but were unable to do so.

Taking "Mas" does not mean taking Holy Communion. It is sharing in a fellowship meal and is a sign of Christian charity and spiritual kinship.

When we participate in the Divine Liturgy and take Holy Communion we are united with Christ by receiving His Body and Blood. Therefore, the "mas" offered to the congregation is intended for those who but did not partake in the holy sacrament.

#### **Exiting the Church**

Your departure from church should be as reverent and as orderly as your entrance. Before exiting the Church turn toward the Altar, make the sign of the cross and depart from God's house.

In the Armenian Church when the service concludes, the officiating clergy holds the Gospel for congregation members to approach and receive his personal blessings before leaving the church.



# URGENT AID APPEAL FOR LEBANON



## ՉԵՈՒԾ ՉԵՈՒԻՂ ՄԷՉ, ԼԻՖԱՆԱՆԱՀԱՅ ԵՂԲԱՅՐ

What is happening in **Lebanon** these days is inexcusable? It is the culmination of many decades of misrule & corruption across all parties that has further been compounded by a dreadful port explosion a year ago ... and then the meltdown of a whole system.

Today, you **cannot find medicines, you cannot find fuel or diesel, you cannot find many basic staples, you cannot find electricity supplies, you cannot get water, and you cannot even find bread.**

Armenians are not spared this calamity. Whilst there are those who can still out-manoeuvre the system, most Armenians - from Bourj Hammoud to Mar Mikhaël and beyond - are in the same leaking boat as they try to eke out their daily existence. Armenian Schools have reduced their timetable from six days to four days due to fuel shortage and other basic needs. There are a large number of Armenian families (over 3 to 4 thousand) who cannot put food on the table and are reaching to humanitarian cooked food centres for assistance.

In response we are appealing to our Community Members in United Kingdom for support to the Armenian Community of Lebanon, we hereby announce of a fundraising campaign that ACC of UK has started to help our compatriots at this very difficult time.

Over the next four weeks we kindly request and call for a considerable sum to be raised to stand in collective solidarity with our Sisters and Brothers in Lebanon.

**“But do not forget to do good and to share” (Hebrews 13:16)**

Funds collected will be transferred to the Armenian Humanitarian Organisations such as, Armenian Relief Cross of Lebanon, Jenishian Memorial Foundation, Howard Karagheusian Commemorative Corporation (HKCC) Medical Centre, Armenian Sanatorium of Azrounieh and etc.

We are at the middle of winter, your generosity can help to bring food and warmth to those who are in desperate need.

Please make your donations to ACC of UK “Aid Lebanon” in person or by post or electronically to this account as follows:

**Bank:** HSBC, Name: Armenian Community Council of U.K.

**Sort Code:** 40-06-19 **Account Number :** 41606786

Alternately and in addition to above, please donate £5.00, £10.00, £20.00 or more at the safe box located at the entrance of the St Yeghiche Armenian Church.

Thank you for your generosity and May the Lord bless each and every one who helps their Brother and Sister in need.

**St Yeghiche Armenian Church Council**

### Announcement

Dear St Yeghiche Parish Registered Members,

We are pleased to inform you that our Annual Parish General Assembly meeting will take place on 20th February 2022 at St Yeghiche Armenian Church at 1:30pm.

As stated in our constitution all registered members are encouraged and should participate at this Annual Parish Assembly meeting provided they have paid their Parish Contribution for the year 2021.

Your attendance is extremely important to evaluate and support your Parish and its council who have collectively volunteered to run the activities at the church and within your Parish. We look forward seeing you

**St Yeghiche Armenian Church Parish Council**

### Join St. Yeghiche Choir

Join us in the celebration of the Divine Liturgy, Badarak, at St. Yeghiche Armenian Church in Cranley Gardens. Deepen your faith and discover your talent as a choir member by learning the Armenian hymns and rituals. No prior experience or knowledge is needed. The choirmaster, Aris Nadirian, will help you build your confidence and proficiency in singing the liturgy.

We look forward to welcoming everyone to our choir. Your presence will expand and enrich our choir. For further details, please contact: [services@styeoghiche.org.uk](mailto:services@styeoghiche.org.uk)





## Coffee break with Fr Nshan

St Yeghiche Armenian Church Parish Council is proud to announce the launch of  
“an informal conversation over coffee with Fr Nshan”  
on general topics and our understanding of Armenian Apostolic Church teachings.

Please join Fr Nshan via zoom twice a month on Thursday evenings starting from  
17<sup>th</sup> February 2022 @7:00 pm.

Details of how to join will be published in our Sunday Bulletin, alternatively you can send your interest to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) or call 020 7373 8133 and register to enable us to send you the relevant link.

### Serve the church and your community as a deacon, sub-deacon or acolyte

Join us in the celebration of the Divine Liturgy (Badarak) in the Armenian churches in the UK and become an altar server. Deepen your faith and discover your talents by learning the deacons' duties and singing the Armenian hymns.

No prior experience or knowledge is needed. The clergy will help you build your confidence and proficiency in singing and chanting. Deacons and altar servers join the Primate and clergy during visits to mission parishes across the United Kingdom.

We look forward to welcoming everyone to serve as Deacons. Your presence will expand and enrich our altar. For further details, please contact: [services@styeghiche.org.uk](mailto:services@styeghiche.org.uk)



### Առակ հուսահատության մասին

Շատ տարիներ առաջ Սատանան որոշեց գլուխ գովել և ի ցույց դրեց իր զինանոցի բոլոր զենքերը: Նա դրանք զգուշորեն տեղադրեց ապակե ցուցափեղկում և ամրացրեց դրանց վրա պիտակներ՝ նշելով, թե որը ինչ է և ինչ արժե:

Ինչ հավաքածու էր դա: Այստեղ էր գտնվում և **Նախանձի** ոսկե դանակը, և **Զարության** մուրճը, և **Ժլատության** թակարդը: Փայտիկների վրա գեղեցիկ ձևով շարված էին նաև **Վախի**, **Գոռոզության** և **Ատելության** բոլոր զենքերը: Դրանք բոլորը դրված էին գեղեցիկ բարձերի վրա և հիացնում էին Դժոխքի բոլոր այցելուներին:

Իսկ ամենահեռու դարակի վրա դրված էր փոքրիկ, ուշադրություն չգրավող և բավականաչափ մաշված փայտե սեպ, որի վրա ամրացված էր «**Հուսահատություն**» պիտակը: Ի զարմանս բոլորի՝ նրա արժեքը ավելի մեծ էր, քան բոլոր մնացած զենքերի արժեքը բոլորը միասին:

Այն հարցին, թե ինչու է Սատանան այդ զենքը մնացածից ավել գնահատում, նա պատասխանեց.

— Սա միակ զենքն է իմ զինանոցում, որի վրա ես կարող եմ հույս դնել, եթե մնացած զենքերը իրենց չարդարացնեն:

Նա քնքշորեն շոյեց փայտե սեպը և շարունակեց.

-Եթե ինձ հաջողվի այն մտցնել մարդու գլխի մեջ, նա կբացի դռները մնացած բոլոր զենքերի առաջ:

Այնպես որ, սիրելի՛ ընթերցող, երբեք, երբեք, երբեք մի հուսահատվեք, քանզի ձեր ճանապարհին ինչ-որ տեղ միշտ մի լուսավոր կետ կա, որ դառնալու է ձեր կյանքի մասը:



### 3: This week's message from our Priest in Charge

**Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն.

*«Երբ Յիսուս իմացաւ, որ գալու են իրեն բռնել տանելու, որպէսզի իրեն թագաւոր անեն, դարձեալ միայնակ դէպի լեռն գնաց»* (Յովհ. 6:15):

Քրիստոսասէր եղբայրներ եւ քոյրեր,

**«Արարածների Արարիչ, տէրերի Տէր, աստուածների Աստուած»** որակումներով է աղօթքների մէջ օրհնաբանում Եկեղեցին Աստծուն ամէն առաւօտ: Ինչո՞ւ Քրիստոս մերժեց թագաւոր լինել, եթէ Ինքը տէրերի Տէրն է, թագաւորների Թագաւորը, քանզի տեսնում ենք, որ Իր Ծննդեան ժամանակ նոյնիսկ օտար թագաւորները եկան երկրպագելու Նրան իբրեւ նորածին Արքայի: Իր քարոզութիւնների ընթացքում էլ Քրիստոս բազմաթիւ անգամներ գործածեց **«Իմ թագաւորութիւնը, Երկնքի թագաւորութիւն, Աստուծոյ թագաւորութիւն»** ձեւերը՝ ցոյց տալով, որ Ինքն է միակ թագաւորը, խօսեց այն մասին, որ հրեշտակների հետ Հօր փառքով պէտք է գայ ողջերին եւ ննջեցեալների դատելու եւ արդարներն Իր հետ եւս պէտք է թագաւորեն: Իսկ այս դրուագում, երբ ոգեւորուած եւ խանդավառ ժողովուրդն արդեն ցանկանում է Իրեն թագաւորեցնել, Յիսուս խուսափում է, մերժում եւ միայնակ լեռն բարձրանում՝ աղօթելու:

Գուցէ ձեզանից շատերն են մտքում մեղադրել, որ հրեաները Յիսուսի «արժեքը» չեն իմացել եւ հարկաւոր յարգանքն ու սէրը, պատիւն ու փառքը չեն տուել: Մտածել են, որ իրենք աւելին կանէին Յիսուսի համար, թերեւս պատկերացրել, որ եթէ Քրիստոս մեր ժամանակներում ապրեր, իրենք Նրան ամենից հօգի, ազդեցիկ եւ փառաւոր իշխողը կը դարձնէին: Գրեթէ երեք միլիարդ է քրիստոնէաների թիւը, որ ամէն օր ասում են **«Թող Քո արքայութիւնը գայ»**, որոնք սիրով իրենց միասնական թագաւոր, նախագահ կամ վարչապետ ընտրելու կլինէին Քրիստոսին: Մինչեւ հիմա էլ այս մեղադրանքների շարքը շարունակւում է երբայեցի ժողովրդի նկատմամբ, որ թագաւորաւայել պատւելու եւ փառաւորելու փոխարեն չընդունեցին Յիսուսին եւ դեռ աւելին՝ մատնեցին հռոմէացիներին, որ չարչարուի, կտտանքների ենթարկուի, մտրակի հարուածներ, փշէ պսակ եւ խաչի մահ ընդունի:

Բայց մենք տեսնում ենք, որ ահռելի մեծ քանակութեամբ մարդիկ են գնացել Յիսուսի հետեւից, լսել Նրա խօսքերը, բուժուել հոգով եւ մտքով, սնուել հոգեւորաբար եւ ֆիզիկապէս: Եւ սա է պատճառը, որ ցանկացել են Յիսուսին իբրեւ իրենց թագաւոր տեսնել: Ուրեմն՝ ինչո՞ւ Քրիստոս մերժեց իրենց այս անկեղծ ցանկութիւնը, խանդավառ որոշումը եւ մեկուսացած, միայնակ ելաւ լեռը:

Պատասխանը երեւում է յաջորդ հատուածի մէջ, ուր ժողովուրդը գալիս է փնտրելու Յիսուսին: **«Տիրերիայից ուրիշ նաւակներ էլ գալիս էին մօտ այն տեղին, ուր հացն էին կերել»** (Յովհ.6:23): Յաջորդ օրն իսկ պատասխանը լաւագոյնս տալիս է հէնց Ինքը՝ Քրիստոս, երբ ցոյց է տալիս պատճառը, թէ ինչո՞ւ են կրկին եկել փնտրելու Իրեն եւ թէ ինչ նպատակով էին նախորդ օրն ուզում թագաւոր դարձնել Իրեն: Պատճառը հացի բազմացումն էր, երբ մի քանի նկանակը եւ ձուկը, Քրիստոսի ձեռքում օրհնուելով, բաժանուել էր հինգ հազարին՝ գումարած կանայք եւ երեխաները եւ դեռ տասներկու զամբիւղ հաց աւելացել էր: Քրիստոս Իրեն փնտրողներին ասում է. **«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, դուք ինձ փնտռում էք ոչ թէ նրա համար, որ նշաններ տեսաք, այլ որովհետեւ կերաք այն հացից եւ կշտացաք»** (Յովհ.6:26): Այդ հացը **«կորստեան ենթակայ կերակուր»** է կոչում՝ ցոյց տալով, որ մարդիկ ոչ թէ Իրեն, այլ աւելի կերակուրն ու իրենց որովայնն են սիրում: Մինչ դա Յիսուս անհաշիւ սքանչելիքներ եւ հրաշքներ էր գործել, բայց նրանք այդպէս չէին զարմացել եւ ընդունել Նրան: Այլեւս չէին մեղադրում շաբաթը

խախտելու մեջ, օրէնքը չպահելու համար չէին յանդիմանում: Իսկ **«կորստեան ենթակայ կերակուրի»** համար Նրան այնքան մեծ են անուանում, որ նոյնիսկ ընդունում են իբրեւ մարգարէի եւ դեռ ուզում են թագաւոր դարձնել՝ կարծես այդ կերակուրի շարունակական լինելն ապահովելով: Քրիստոս, մերժելով այս առաջարկը, օրինակ է տալիս մերժելու **«կորստեան ենթակայ կերակուրի»** գայթակղութիւնը, ինչպէս անապատում մերժեց սատանային, որ կրկին հացով եւ երկրի բոլոր թագաւորութիւնները տալու խոստումով էր փորձութեան ենթարկում Նրան: Դրախտաբնակ Ադամ եւ Եւա չդիմացան այս փորձութեան, Եսաւն իր անդրանիկութիւնը վաճառեց այս փորձութեան արդիւնքում, Աւետեաց երկիր քայլող ժողովուրդն այս պատճառով կասկածի տակ դրեց Մովսէսին եւ Աստծոյ առաջնորդութիւնը՝ եգիպտական գերութեան սխտորն աւելի սիրելով:

Քրիստոս միայնակ բարձրացաւ լեռ՝ աշակերտներից ոչ ոքի չվերցնելով իր հետ: Սա կարծես նրանց սիրոյ փորձութիւնն էր՝ զիշերը նաւակի մէջ փոթորիկի ժամին զգալու, որ անգամ այդտեղ Քրիստոս իրենց չի լքում: Առաքեալները տեսնում են, որ Յիսուս դէպի իրենց է քայլում ջրերի վրայով, հրամայում է եւ ծովը խաղաղւում է: Նրանք տեսնում են, որ մարդկանցից թագաւոր լինել մերժող Քրիստոս թագաւորն է բնութեան եւ ծովի, որ ընկղմող Պետրոսին ձեռք մեկնելով փրկում է՝ հաւատալու եւ չերկմտելու նոր դաս տալով իրենց բոլորին:

Նիւթի եւ հոգեւորի յաւերժական վեճի պատասխան է աւետարանական այս դրուագը, որ լրում է ստանում այն խօսքով, որ ասում է Յիսուս հացի համար Իրեն փնտրող ժողովրդին. **«Գնացէք աշխատեցէ՛ք ոչ թէ կորստեան ենթակայ կերակրի համար, այլ այն կերակրի, որը մնում է յաւիտենական կեանքի համար, եւ որը մարդու Որդին կը տայ ձեզ»** (Յովհ.6: 27):

Կերակուր, որ ենթակա է կորստեան, եւ կերակուր, որ մնում է յաւիտենական կեանքի համար: Երկուսի աղբիւրն էլ ինքն է՝ Տէրը: Նիւթը մերժելուց յետոյ միայն հնարաւոր է հոգու հացի ճաշակումը: **«Կորստեան ենթակա կերակուրը»** պետք է ստորադասուի **«յաւիտենական կեանքի համար»** եղող կերակուրին, որ **«մարդու Որդին կը տայ ձեզ»**: Եկեղեցու կեանքի մէջ սա սուրբ Հաղորդութիւնն է՝ Քրիստոսի կենարար Մարմինը, որ Յիսուս հաստատեց վերնատանը Վերջին ընթրիքին՝ այն Նոր Ուխտ կոչելով: Այս Հացի մասին է Յիսուս երկարօրէն բացատրում հրեաներին, որոնք մանանայի պէս հրաշք էին փնտրում, որ կրկին որովայնի համար էր եւ ոչ հոգու: Դրա դիմաց է Քրիստոս ասում. **«Ես եմ կենաց հացը. ով դէպի ինձ գայ, քաղց չի զգայ, եւ ով ինձ հաւատայ, երբեք չի ծարաւի»** (Յովհ. 6:35):

Աստուած մեզ համար սա պատրաստեց, որ հաղորդակից դառնանք Իր շնորհներին, այդ կերակուրը, ըստ Իր խօսքի, յաւիտենական կեանքի համար լինի. **«Ով ուտում է իմ մարմինը եւ ընկնում իմ արիւնը, յաւիտենական կեանք ունի. եւ ես նրան վերջին օրը յարութիւն առնել պիտի տամ»** (Յովհ. 6:35): Յաւիտենական կեանքի համար հաց կարող է տալ Նա, Ով յաւիտենական թագաւոր է, որի **«թագաւորութիւնն այս աշխարհից չէ»** (Յովհ 18:36), քանզի այս աշխարհն էլ կորստեան ենթակայ է: Երկրային թագաւորները կարողանում են հոգալ իրենց հպատակների հացը, որ ժամանակաւոր է՝ կորստեան ենթակայ, ինչպէս որ ժամանակաւոր են իրենք իսկ: Իսկ մենք, ճանաչելով իրական Թագաւորին, Իր հետ բարձրանանք Իր լեռը՝ եկեղեցին, ճաշակենք այն Հացը **«որ իջնում է երկնքից եւ կեանք է տալիս աշխարհին»**, գոհանանք Տիեզերքի Կերակրողից եւ փառաւորենք Նրան այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

**Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**



#### 4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By The Armenian Community for the soul of their compatriots who lost their lives during the Sum-gait massacres.

By Mrs Knarig Mougharian and Daughters Ani and Hourie and Family for the soul of their Husband who was also a loving Father and Grandfather the late **ANTRANIK MEKHITARIAN** on the 2<sup>nd</sup> anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the **MEKHITARIAN** and **MOUGHARIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

**Please Pray For Our Sick:** Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Բահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

**HOKEHANKIST AND IN LIEU OF FLOWERS** Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

#### ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

#### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted:*

#### ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website [www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk)

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: **“St Yeghiche Armenian Church”**.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

**St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.**

